ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 3

## ՀՀ կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) կառավարման խորհրդի նիստի

**ք. Երևան** **3 մարտի 2023թ.**

Ժամը $11^{00}$

**2023 թվականի մարտի 3-ին տեղի ունեցավ ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստ:**

Օրակարգը սահմանված ժամկետում ներկայացվել է Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Ժ. Անդրեասյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար (Խորհրդի նախագահ) |
| Ա. Դանիելյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող |
| Լ. Բալյան | - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ |
| Վ. Սիրունյան | - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Բ.Փափազյան | - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն |
| Ա.Բախշյան | - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական |
| Ա. Հակոբյան | - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն |

**<u>Բացակայում էին՝</u>**

| | |
|---|---|
| Ռ. Գևորգյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Մ. Թադևոսյան | - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ |

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Վ. Մատիկյան | - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար |
| Լ. Մաթևոսյան | -ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ |
| Ա. Գևորգյան | - Խորհրդի քարտուղար |
| Ա. Հայրումյան | - Խորհրդի քարտուղարության անդամ |

**Հրավիրվածներ՝**

| | |
|---|---|
| Ա. Սվաջյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ |
| Ռ. Գալստյան | - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ |
| Ն. Հովհաննիսյան | - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ |
| Վ. Պետրոսյան | - ՀՀ կրթության տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի պետ |

## ՕՐԱԿԱՐԳ

**Հարց 1.** ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Արսեն Բաղդասարյանի թեկնածության առաջադրում՝ ՀՀ վարչապետի նշանակմանը ներկայացնելու նպատակով:

**Հարց 2.** ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Ռաիսա Գալստյանի թեկնածության առաջադրում՝ ՀՀ վարչապետի նշանակմանը ներկայացնելու նպատակով:

Նիստը վարում էր Խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանը:**

Խորհրդի նախագահը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց Օրակարգը:

Խորհրդի նախագահի առաջարկով Խորհուրդը քվեարկությամբ՝ **7 «կողմ» ձայնով** (միաձայն) հաստատեց օրակարգը:

Վ. Մատիկյանը ծանոթացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոններում նշանակվող թեկնածուներին:

Թեկնածուները ներկայացրեցին իրենց ինքնակենսագրականը և պատասխանեցին Խորհրդի անդամների հնչեցրած հարցերին:

Ա. Դանիելյանը հարց ուղղեց Վ. Մատիկյանին՝ ըստ տեղակալների համակարգման ոլորտների՝ աշխատանքի բաժանումը:

Վ. Մատիկյանը պատասխանեց, որ քննարկման արդյունքում կիրականացվի ըստ համակարգման ոլորտների աշխատանքի բաժանում և լրացուցիչ կտեղկացվի Խորհրդի անդամներին:

Ամփոփելով նիստը, **Ժ. Անդրեասյանը** քվեարկության դրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոնում Արսեն Բաղդասարյանի և Ռաիսա Գալստյանի թեկնածությունը՝ ՀՀ վարչապետի նշանակմանը ներկայացնելու հարցերը:

**Խորհուրդը՝ 7-ական «կողմ»** ձայնով հավանություն տվեց ներկայացված թեկնածուների նշանակմանը:

**Խորհուրդը որոշեց՝**

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Արսեն Բաղդասարյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ վարչապետի նշանակմանը:

2. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Ռաիսա Գալստյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ վարչապետի նշանակմանը:

3/3/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**Խորհրդի նախագահ՝** Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. Անդրեասյան**

**Խորհրդի քարտուղար՝** **Ա. Գևորգյան**

ստորագրություն